92 Նոյն տեղում, էջ 75:
93 Նոյն տեղում, էջ 71-72: Տե՛ս նաեւ էջ 52:
94 Նոյն տեղում, էջ 164:
95 Նոյն տեղում, էջ 166:
96 Նոյն տեղում, էջ 166, 175:
97 Նոյն տեղում, էջ 176:
98 Նոյն տեղում, էջ 189-190, 192:
99 Նոյն տեղում, էջ 192-193:
100 Նոյն տեղում, էջ 240:
101 Նոյն տեղում, էջ 241-243:
102 Նոյն տեղում, էջ 195:
103 Նոյն տեղում, էջ 204-206:
104 Նոյն տեղում, էջ 200:
105 Նոյն տեղում, էջ 358:
106 Նոյն տեղում, էջ 196, 329:
107 **E. Lavisse**, *Préface*.– **V. Bérard**, նշ. աշխ., էջ II:
108 **E. Lavisse**, *Notre politique orientale* // "Revue de Paris", 15 mai 1897, p. 275. Բերարի գիրքը միեւնոյն բարձր գնահատականին է արժանացրել Ա. Զոպանեանը. տե՛ս **A. Tchobanian**, նշ. աշխ., էջ 10:
109 Սոյն յօդուածում մենք շրջանցել ենք Հայ դատի անմնացորդ նուիրեալ Պիեռ Քիւառի գործունէութիւնը, որին կ'անդրադառնանք մեր հետագայ հրապարակումներում:
110 **V. Dadrian**, *Histoire du génocide arménien. Conflits nationaux des Balkans au Caucase*, Paris, 1996, p. 160. Տե՛ս նաեւ **Y. Ternon**, նշ. աշխ., էջ 132:
111 Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman, 1893-1897, Paris, 1897; Documents diplomatiques. Affaires arméniennes. (Suplément), 1895-1896, Paris, 1897.

ՔԱՋԲԵՐՈՒՆՈՒ ԲԱՆԱՀԱՒԱՔԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ալվարդ Ղազիյեան

Հայ ժողովրդի նիւթական ու հոգեւոր մշակոյթի գանձերը մոռացումից ու կորստից փրկելու, նրա առաջընթացին ըստ ամենայնի նպաստելու գործում իր նշանակալից լուման է ներդրել յանիրաւի ստուերում մնացած մի համեստ գործիչ, որը գիտական, հասարակական շրջանակներում յայտնի էր Քաջբերունի ծածկանունով:

Քաջբերունին՝ Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեանը ծնուել է 1837 թ. Ուզունթալա գիւղում (այժմ ՀՀ Տաւուշի մարզի Իջեւանի ենթատարածքի Այգեհովիտ գիւղ) քահանայի ընտանիքում: 1858 թ. աւարտելով Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, մեկնել է Մոսկուա եւ 1864 թ. վերջացրել ուսումնառութիւնը, ստացել բժշկի մասնագիտութիւն: Նրա ուսման ծախսերը հոգացել է ղզլարցի Հ. Պիտունեանցը, որին ամբողջ կեանքում Քաջբերունին յիշել է խոր երախտագիտութեամբ:

Աւելի քան կէս դար Քաջբերունին ծառայել է սկզբում իբրեւ գաւառական, ապա՝ հիգիենիկ բժիշկ: Իր մասնագիտական գործունէութիւնը նա սկսել է Ստաւրոպոլի նահանգում (1867-1871 թթ.), իսկ 1871 թուականից այն ընթացել է Անդրկովկասում: Աշխատել է իբրեւ գաւառական բժիշկ Ալեքսանդրապոլում (1871-1875 թթ.), Շարուր-Դարալագեազում (1875-1879 թթ.), կրկին Ալեքսանդրոպոլում (1879-1885 թթ.), սակայն այս անգամ իբրեւ ուսուցիչ, ապա նորից վերադարձել է իր մասնագիտութեանը Բաքուի նահանգի Սաղեան քաղաքում, Շամախու գաւառում (1885-1898 թթ.): 1899-1916 թթ. նա վարում է Բաքու քաղաքի հիգիենիկ բժշկի պաշտօնը: Քաջբերունին կամաւոր կերպով՝ իբրեւ զինուորական բժիշկ մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: 1916 թ. անցել է Թոշակի, հաստատուել հայրենի գիւղում, ուր եւ 1920 թ. մարտի 9-ին կնքել է իր մահկանացուն:

Քաջբերունին ապրել է գաւառական բժշկի չարքաշ ու դժուարին կեանքով: Ծառայողական պարտականութիւնների բերումով նա շրջագայել է Անդրկովկասում, եղել է բազմաթիւ բնակավայրերում, մօտիկից ծանօթացել է թէ՛ ժողովրդի կեանքին, կենցաղին, ծէսերին, սովորութիւններին, տօներին, բառ ու բանին, թէ՛ տուեալ վայրի բնական, աշխարհագրական միջավայրին, պատմա-մշակութային կանգուն ու աւեր յուշարձաններին: Մասնագիտութեամբ լինելով բժիշկ, բայց ունենալով լայն հնարաւորութիւններ, շնորհիւ հիմնաւոր հայկական կրթութեան ու աստուածատուր կարողութեան, նա մասնագէտ գիտնականի մօտեցումներ է ցուցաբերել հայագիտական այն բնագաւառների հանդէպ, որոնց առնչուել ու որոնցով զբաղուել է: Նրա քննախոյզ հայեացքի տեսադաշտում են եղել հայ գրականութիւնն ու ժողովրդագիտութիւնը, հայ ժողովրդի պատմութեան հին ու նոր իրողութիւնները, հնագիտութիւնն ու վիմագրութիւնը, բժշկութիւնը, դպրոցն ու թատրոնը, հայ հասարակութեանը յուզող հրատապ խնդիրները: Քաջբերունին խորապէս ապրել է մայր ժողովրդի XX դարասկզբի ողբեր-

© National Library of Armenia

գութիւնը, իր գրչով արձագանքել այդ դաժան երեւոյթին: Միով բանիւ իբրեւ ճշմարիտ, ու չենք վարանում ասելու, ազնիւ գիտնական նա մշտապէս իր ժողովրդի հետ էր, իր գործով ծառայում էր նրա ինքնադրսեւորման ու ինքնահաստատման գաղափարին: Նրա բազմամեայ գիտական պրպտումների արդիւնքները, մասնագիտական ու օրուայ յուզող հարցերին նուիրուած յօդուածները լոյս են տեսել անդրկովկասեան հայ եւ ռուսալեզու պարբերականներում, հրատարկուել առանձին գրքերով, մի մասն էլ տակաւին մնում է անտիպ, իսկ մի մասն էլ համարւում է կորած:

Քաջբերունին իր գործունէութիւնը սկսել է գեղարուեստական գրականութեամբ: 1861 թ. Մոսկուայում Ս. Նազարեանցի «Հիւսիսափայլ»-ում լոյս է տեսնում նրա «Տէր Սարգիս» վէպը[1], որը սակայն մնում է անաւարտ: 1872 թ. «Մեղու Հայաստանի» լրագրի էջերում (N 24, 25) տպագրւում է նրա «Սուրբ Գեւորգի ղուլը»: Ցայտնի է, որ նա գրել է այլ գրական գործեր, որոնց ձեռագրերը կորած են: Քաջբերունու գործունէութիւնը սկզբնաւորող «Տէր Սարգիս» վէպն արժանացել է Մ. Նալբանդեանի ամենաբարձր գնահատականին. «Եթէ երբեւէ լինի այդ կիսատ մնացած գործը աւարտուի, միեւնոյն հոգով հմտութեամբ շարունակելով. այդ ժամանակ մեր նոր դպրութեան մէջ այդ գործը նոյն տեղը կ'ունենայ ինչ տեղ ռուսական դպրութեան մէջ ստացել է «Մեռած անձինք»: Թող կանխիկ ընդունի մեր սրտանց շնորհակալութիւնը հայկական Գոգոլը որին մաղթում ենք մի փայլուն գալոցք»[2]: «Տէր Սարգիս» եւ «Սուրբ Գեւորգի ղուլը» աչքի են ընկնում ժողովրդական կեանքի, կենցաղի, սովորութիւնների նկարագրութիւնների, բառ ու բանի նմոյշների յագեցուածութեամբ:

Ժողովրդի կեանքը իր ծիսական, տօնական առտնին արտայայտութիւններով, ժողովրդական երգն ու պարը իր տեսակներով մշտապէս եղել են Քաջբերունու գիտական հետաքրքրութիւնների ոլորտներում: «Փորձ», «Արարատ», «Լուսայ» ամսագրերում տպագրուած նրա «Ճանապարհորդական նկատողութիւնք», «Ուղեգրութիւններ» խորագրերով յօդուածաշարերում զգալի տեղ են գրաւում ազգագրական նիւթերը, հայ ժողովրդական բանահիւսական ու աշուղական ստեղծագործութիւնները:

«Ազգագրական հանդէս»-ի 1901-1902 թթ. 7-8, 9 գրքերում լոյս է տեսնում Քաջբերունու ժողովրդագիտական հաւաքածոն «Հայկական սովորութիւններ» խորագրով[3]: Հաւաքածոն լոյս է տեսել նաեւ առանձին գրքով[4]: Հարկ է նշել, որ հաւաքածոյի խորագիրը ժամանակակից առումով չի համապատասխանում բովանդակութեանը. այն որքան ազգագրական («Սովորութիւններ»), նոյնքան բանահիւսական է: Մի հանգամանք եւս: Հեղինակը իր «Երկու խօսքում» գրում է. «Համաձայն ցանկութեանս ես գրի եմ առել այն բազմազան եւ բազմատեսակ նիւթերը հայ ազգի կեանքից, որոնց մի խոշոր քանակութիւն մինչեւ այսօր անմշակ եւ անտիպ մնալով, միւս մասը կարողացել եմ լրագրութեան միջոցով մատուցանել հայ հասարակութեան ընթերցող բաժնին: Վերջին կարգին են պատկանում իմ «Ճանապարհորդական նկատողութիւնք» ստուար աշխատութիւնը եւ այլ շարքերը»[5]:

Քաջբերունու ազգագրական-բանահիւսական ժառանգութիւնը բազմաժանր է. նրա կողմից դասակարգուած եւ «Ազգագրական հանդէս»-ի էջերում զետեղուած նիւթի վերնագրերի պարզ թուար-

կումը այդ իրողութեան վկայութիւնն է. Նրա հաւաքածոն ունի երկու բաժին. տօներ, ընտանեկան կեանք եւ սովորութիւններ: Տօների բաժնում ներկայացուած են Քրիստոսի ծննդեանը, Ս. Սարգիս զօրավարին, Տեառնընդառաջին, Մեծ պասին, Ծաղկազարդին, Զատկին, Համբարձման ու Վարդավառին վերաբերուող սովորութիւններն ու բանահիւսական ստեղծագործութիւնները: Երկրորդ բաժինն ընդգրկում է ամուսնութեանը վերաբերող ծիսական ողջ արարողակարգը եւ ապա մանկախաղաց երգեր եւ օրորներ, որոնք բանահաւաքը կոչում է նանիկներ, գութանի երգեր, «երեխանց խաղեր», հանելուկներ, «թափամաջա», արգախօսութիւններ, աղօթքներ:

Բանահաւաք Քաջբերունին բանահիւսական նմուշները մէջ է բերում կենդանի կենցաղավարմամբ, ծիսական արարողութիւններին ու սովորութիւններին զուգակցուած: Այդ հանգամանքը նրա ժողովրդագիտական ժառանգութեան արժանիքն է «Ճանապարհորդական նկատողութիւնք» յօդուածաշարում ազգագրական իրողութիւններին նա առաւելապէս մեծ նշանակութիւն է դարձնում: Բացառիկ արժէք ունի Վայոց ձորի Հասանի գիւղի եւ Խաչիկ գիւղի հարսանիքի նկարագրութիւնը[6]: Արդէն «Ազգագրական հանդէս»-ում Քաջբերունին ընդհանրացնում է հայկական հարսանիքն ըստ իր հաւաքած նիւթերի: Նկարագրելով հարսանիքի փուլերը յաջորդաբար, նա մեջբերում է տուեալ փուլի ընթացքում կատարուող երգերի նմուշներ, ընդգծելով դրանց կենցաղավարման ազգագրական շրջանը, միաժամանակ հետաքրքիր, ուշագրաւ դիտողութիւններ անում այս կամ այն առանձնայատկութեան վերաբերեալ:

Քաջբերունին նոր ժամանակներում առաջիններից է, որ անդրադարձել է հայ ժողովրդական պարին եւ այդ նիւթը յատուկ ուշադրութեան է արժանի: XIX դարի 70-ական թուականներին լինելով Վայոց ձորում նա մասնակից է լինում տեղական մի հարսանիքի, որի մասնակիցները տեղաբնիկներ ու պարսկահայեր էին[7]: Ծիսական արարողութիւններին զուգահեռ նա ներկայացնում է 12 պարից բաղկացած մի շարք: Նա թուարկում է պարերի տեղական բարբառային անուանումները. գեոնդ, ծունկ կոտրուկ, մայմո, երեք ոտք, մաշկէ, շեորոր, եար գեոզալ, սեթայի, թարափի, սիւզմա, եալլի, թռուկ[8], հակիրճ բնութագրում դրանց կատարման ձեւերը, ինչպէս նաեւ նուագածուների ու նուագարանների դերն ու փոխառնչութիւնը պարերի հետ: Բացի այս պարաշարքը նա յիշատակում է նաեւ նոյն միջավայրում հարսանիքի ժամանակ կատարուող «շառաբունի» կոչուող խմբապարը[9], Շիրակում, Բասենում նոյնպէս հարսանեկան արարողութիւնների ժամանակ կենցավարող «Թեխմախ» աղջիկների խմբապարը[10]: Մենապարերը նա անուանում է ձեռնախաղ, կատարումը՝ կաքաւել: Ուշագրաւ է նաեւ Քաջբերունու նկարագրած թատերական ներկայացման նմոյշը, որ նա անուանում է հանգուցեալը եւ նրա յարութիւն առնելը եւ ապա կաքաւով որսը[11]:

Քաջբերունին մասնագէտի հայեացքով է արժէքաւորել բանահիւսական ու ազգագրական ստեղծագործութեան տարբերակի նշանակութիւնը: Նրա ժառանգութեան մէջ տեղ են գտել միեւնոյն նիւթի այլեւայլ շրջաններից գրի առած տարբերակներ: Աւելին, նա ներկայացրել է միեւնոյն ազգագրական միջավայրում ապրող բնիկների ու նորաբնակների սովորութիւններն ու երգերը, օրհնանքները ու բարեմաղթութիւնները, աղօթքներն ու հանելուկները: Այդ առումով նա իբրեւ

© National Library of Armenia

ճշմարիտ ժողովրդագէտ ականջալուր է եղել ժողովրդի ձայնին: Խաչիկ գիւղում հարսանիքի ժամանակ ժողովրդական բառ ու բանին քաջածանօթ խնամի Թադոսը հետեւեալն է ասում բանահաւաքին. «... Իմ հիւրերիս մէջ այսօր կան նոր եւ հին հայեր, այսինքն պարսկական գաղթականներ եւ Դարալագեազի հին բնիկներ, ինչպէս զորօրինակ մենք խաչիկներս ենք: Որքան երկու տեսակ հայերը եւս ունեն հասարակաց միատեսակ սովորութիւններ, աւանդութիւններ եւ այլն, նոցանից իւրաքանչիւրը այնուամենայնիւ ունի իւր առանձնակի սեփական, յատուկ սովորութիւնները, ուրախութեան ցոյցերը եւ այլն»[12]:

Ազգագրական-բանահիւսական իրողութիւնների հաւաքման եւ հրատարակման ժամանակ Քաջբերունին ձգտել է հարազատ մնալ դրանց լեզուական կողմին: Իսկ նրա նիւթերի աշխարհագրական սահմանները բաւականաչափ ընդգրկուն են. ներկայացնում են բազմազան բարբառային միջավայր. Այրարատ, Շիրակ, Բասեն, Վայոց ձոր, Գանձակ, Աղստեւի հովիտ, Շամախի եւ այլն:

Ուշագրաւ է նրա ժառանգութեան հետեւեալ յատկանիշը. ազգագրական-բանահիւսական դրսեւորումները նա հաղորդում է տեղական եզրերով: Նշելով մի անուանում՝ նա համապատասխան զուգահեռներ է բերում այլ՝ իրեն յայտնի ազգագրական շրջաններից, հարկ եղած պարագայում գրական հայերէնով թարգմանում, մեկնաբանում ու բացատրում: Հարսանեկան արարողութիւնների այս կամ այն փուլը, երեւոյթը նա ներկայացնում է Վայոց ձորի, պարսկահայոց, Շիրակի, Ուտիքի միջավայրում գործածուող անուանումներով. ծաղ, ծառ, յիշելիք, կանչ, ազաբ, մակար, ուրց, ուսկապ, ղուշ, հաւթռոնք եւ այլն:

Հայ ժողովրդի կեանքում կենցաղարող ծիսական արարողութիւնները, սովորութիւնները, բանահիւսական ստեղծագործութիւնները գնահատելիս Քաջբերունին յաճախ է դիմում հայ պատմագիրների երկերին: Կաքաւի որսի, հարսնացուի վրայ քաղցրաւենիք ու չոր միրգ ցանելու, փեսացուի գլխավերեւում թուր պահելու, փեսացուին սափրելիս գլխին մազափունջ թողնելու, կաքաւելու մենապարի եւ այլ նման յիշողութիւնների մի մասը դիտարկում է իբրեւ տոհմիկ ազգային արմատներ ունեցող, իսկ մի մասը՝ մազափունջ թողնելը, թուր պահելը իբրեւ պատմական հանգամանքների բերումով առաջացած եւ հաղորդում դրանց ծագման վերաբերեալ պատմական աւանդութիւններ: Ըստ որում յաճախ նա հանդէս է գալիս իբրեւ բանագէտ՝ ժամանակակից ըմբռնմամբ:

«Ճանապարհորդական նկատողութիւնք» յօդուածաշարի շնորհիւ անդարձ կորստից ու մոռացութիւնից փրկուել ու մեզ են հասել արեւելահայ ու պարսկահայ մի շարք անյայտ աշուղների անուններն ու նրանց ստեղծագործութիւնները, որոնք հայ ժողովրդական երգարուեստի անքակտելի մասն են կազմում: Այդ երգերը զարդարել են մեր հարսանիքներն ու տօները, զուարթ տրամադրութեամբ համակել հոգսաշատ ժողովրդի սակաւաթիւ անհոգ օրերը: Այս կապակցութեամբ բանահաւաքը գրում է «Որքան միջոցներս ներել են ես ժողովել եմ նոցա (աշուղների - Ա. Ղ.) երգերը, բայց հազարաւոր երգեր մնում են առանց ժողովելու եւ տպագրութեան եւ այդ պատճառով մոռացւում են մի քանի սերնդից յետոյ: Այսքանով ես կամեցայ տալ ժողովրդական երգերի ժողովելու կարողութիւնը: Երբ նոքա տպագրութեան միջոցով լոյս աշխարհ կը տեսնեն, այն ժամանակ նոքա աւելի կ'ընդհանրանան ժողովրդի մէջ: Ժողովուրդը կ'ընտելանայ հայ եւ ոչ օտար լեզուով երգած երգերին. հեղինակները աւելի վստահութիւն կը ստանան եւ սովորութիւն կ'անեն հայ լեզուով արտայայտուելու իւրեանց հոգեկան զգացմունքները եւ այլն»[13]: Եւ այսպէս Քաջբերունին յիշատակում է հետեւեալ աշուղների անունները. նախիջեւանցի Ղարա, դարալագեազցի Սահակ օղլի, Ոսկան օղլի, Ղազար, Սարգիս-Թունարի, Քեամալի եւ յայտնի աշուղ, սալմաստեցի Ցարութիւն, տեղական բարբառով՝ Հարո: Սալմաստեցի Ցարութիւնի վերաբերեալ կենսագրական տեղեկութիւններ է հաւաքել Ուլիա-Նորաշէն գիւղում ժողովրդական երգերի գիտակ ծերունի Հախվերդի Տէր-Կարապետեանից[14]: Նրա տեսադաշտից դուրս չեն մնացել այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են աշուղների միմեանց նկատմամբ ունեցած յարգալից վերաբերմունքը, երգելու, ասպարեզ մտնելու հրաւերքը: «Ուղեգրութիւններում» ներկայացուած են աշուղ Ղարայի, Սարգիս-Թունարու, Սահակ օղլու եւ սալմաստեցի Ցարութիւնի հայերէն երգերը:

Քաջբերունու ժողովրդագիտական-բանահաւաքչական ժառանգութիւնը թերի կը լինի առանց նրա մասնագիտական գործունէութեան բնութագրման: Գործնական աշխատանքներին զուգընթաց առողջապահութեանը, բժշկութեանը վերաբերող յօդուածներով նա հանդէս է եկել ժամանակի կովկասեան ռուսալեզու եւ հայալեզու մամուլում, ինչպէս նաեւ յատուկ զեկուցումներով: Նրա հրապարակումները նուիրուած են տեղական բուժիչ հանքային ջրերի, բոյսերի բուժիչ յատկութիւնների բացայայտման ու նրանց օգտագործման անհրաժեշտութեանը, տարատեսակ հիւանդութիւններ յարուցող միջատների նկարագրութեանը, շրջակայ կենսապայմանների պահպանման հարցերին: Յաւելենք, որ 1867 թ. նա ընտրուել է Կովկասի բժիշկների ընկերութեան անդամ:

Սոյն շարադրանքը նուիրուած էր Քաջբերունու ժառանգութեան մի բաժնի լուսաբանմանն ու արժեւորմանը: Մինչդեռ նա անգնահատելի վաստակ ունի հայագիտութեան մի շարք այլ ճիւղերի՝ պատմութեան, հնագիտութեան, վիմագրութեան, աշխարհագրութեան ասպարէզներում եւ որ չէ թէ յօդուածի, այլ առանձին հետազօտութեան ու գնահատութեան թեմա է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 «Հիւսիսափայլ», Մոսկուա, 1864, NN 5,8,9,12: Տե՛ս նաեւ «Տէր Սարգիս եւ Սուրբ Գեւորգի դուլը», առաջաբան Ռ. Զարեանի, Երեւան, 1938:

2 **Մ. Նալբանդեան**, *Կրիտիկա «Սոս եւ Վարդիթերի»*:

3 «Ազգագրական հանդէս», գ. 7-8, Թիֆլիս, 1901, գ. 9, Թիֆլիս, 1902:

4 **Քաջբերունի**, *Հայկական սովորութիւններ*, Թիֆլիս, 1903:

5 «Ազգագրական հանդէս», գ. 7 - 8, Թիֆլիս, 1901, էջ 113:

6 «Փորձ» հանդէս, Թիֆլիս, 1881, («ճանապարհորդական նկատողութիւնք»), էջ 52 - 92:

7 «Փորձ» հանդէս, Թիֆլիս, 1881, («ճանապարհորդական նկատողութիւնք») էջ 52 - 92:

8 «Փորձ» հանդէս, Թիֆլիս, 1881, («ճանապարհորդական նկատողութիւնք») էջ 87 - 88,

9 «Ազգագրական հանդէս», գ 7-8, Թիֆլիս, 1901, էջ 196:

10 «Փորձ» հանդէս, Թիֆլիս, 1881, («Ճանապարհորդական նկատողութիւնք») էջ 82:

11 «Փորձ», էջ 79-80:

12 «Փորձ» հանդէս, Թիֆլիս, 1881, («ճանապարհորդական նկատողութիւնք») էջ 82:

13 «Փորձ» հանդէս, Թիֆլիս, 1881, («ճանապարհորդական նկատողութիւնք») էջ 57:

14 «Փորձ» հանդէս, Թիֆլիս, 1881, («ճանապարհորդական նկատողութիւնք») էջ 47-57:

© National Library of Armenia